

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
«ՉԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ

**ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ  
ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ  
ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
2017**

**ՏԱՐԵԿԱՆ ՁԵԿՈՒՅՑ**

Երևան 2018

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
«ԶԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ

---

**ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ  
ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ  
ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**2017**

**ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ**

Զեկույցը պատրաստվել է «ԶԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի մոնիտորինգի և գնահատման ազգային խմբի կողմից

Երևան 2018

## Բովանդակություն

ՄԻԱՎ վարակի նկատմամբ համաճարակաբանական հսկողությունը Հայաստանի Հանրապետությունում 2017թ. ....	5
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում, 2017թ. ....	5
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և մահվան դեպքերը՝ ըստ գրանցման տարիների.....	5
ՄԻԱՎ վարակի դեպքերը՝ ըստ սեռի և տարիքային խմբերի .....	6
ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերը՝ ըստ փոխանցման ուղիների .....	7
Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ վարակի համաճարակի բնորոշ առանձնահատկությունները վերջին հինգ տարիներին .....	9
ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերը՝ ըստ Հայաստանի մարզերի .....	14
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակն Արագածոտնի մարզում.....	15
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակն Արարատի մարզում .....	15
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակն Արմավիրի մարզում .....	16
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Գեղարքունիքի մարզում.....	16
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Լոռու մարզում.....	17
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Կոտայքի մարզում .....	17
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Շիրակի մարզում .....	18
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Սյունիքի մարզում .....	18
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Տավուշի մարզում .....	19
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Վայոց ձորի մարզում .....	19
Բնակչության տարբեր խմբերի շրջանում ՄԻԱՎ-ի տարածվածությունը և վարքագծային ցուցանիշները .....	20
Դիսպանսերային հսկողություն, հակառետրովիրուսային բուժում, մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելիչ բուժում և հետկոնտակտային կանխարգելիչ բուժում.....	21
Համակցված վարակներ .....	22
Օփիոիդային փոխարինող բուժումը Հայաստանում .....	23
ՄԻԱՎ վարակի բուժման աստիճանասանդղակ (կասկադ), 2017թ.....	24
ՄԻԱՎ-ի դեղակայունության հսկողություն .....	25
Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի բնագավառում 2017 թվականի առաջընթացի վերաբերյալ զեկույցի ցուցանիշներ .....	27
ՄԻԱՎ-ի ՄԵՓՎ-ի վավերացման ցուցանիշներ .....	28
ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն .....	31

**Գծապատկերների ցանկ**

Գծապատկեր 1.	<i>ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և մահվան դեպքերի բաշխումը՝ ըստ գրանցման .....</i>	5
Գծապատկեր 2.	<i>ՄԻԱՎ վարակի դեպքերի բաշխումը՝ ըստ սեռի և տարիքային խմբերի</i>	6
Գծապատկեր 3.	<i>ՄԻԱՎ վարակի դեպքերի բաշխումը՝ ըստ սեռի և գրանցման տարիների, 2013-2017թթ. ....</i>	7
Գծապատկեր 4.	<i>ՄԻԱՎ վարակի դեպքերի բաշխումը՝ ըստ փոխանցման ուղիների, 2013-2017թթ. ....</i>	7
Գծապատկեր 5.	<i>ՄԻԱՎ-ի փոխանցման ուղիները՝ ըստ սեռի, 2013-2017թթ. ....</i>	8
Գծապատկեր 6.	<i>ՄԻԱՎ-ի փոխանցման հիմնական ուղիները, 2013-2017թթ. ....</i>	10
Գծապատկեր 7.	<i>ՄԻԱՎ վարակի արձանագրված դեպքերի բաշխումը՝ ըստ փոխանցման ուղիների և վարակման հավանական վայրերի, 2013-2017թթ. (ՀՀ-ում վարակվածներ).....</i>	10
Գծապատկեր 8.	<i>ՄԻԱՎ վարակի արձանագրված դեպքերի բաշխումը՝ ըստ փոխանցման ուղիների և վարակման հավանական վայրերի, 2013-2017թթ. (արտերկրում վարակվածներ).....</i>	11
Գծապատկեր 9.	<i>Վարակման հավանական վայրերը՝ ըստ տարիների, 2013-2017թթ. ....</i>	11
Գծապատկեր 10.	<i>Միգրացիոն գործոնի դերը 2013-2017թթ. արձանագրված դեպքերի կազմում (մեծահասակներ).....</i>	12
Գծապատկեր 11.	<i>ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի բաշխումը՝ ըստ բնակչության խմբերի, 2013-2017թթ. ....</i>	13
Գծապատկեր 12.	<i>ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի բաշխումը՝ ըստ ՀՀ մարզերի.....</i>	14
Գծապատկեր 13.	<i>ՄԻԱՎ-ի տարածվածությունը մեծահասակների շրջանում Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում և Հայաստանի Հանրապետությունում, 2016թ.....</i>	20
Գծապատկեր 14.	<i>ՄԻԱՎ վարակի բուժման աստիճանասանդղակ .....</i>	31
Գծապատկեր 15.	<i>ՄԻԱՎ-ի վերաբերյալ լաբորատոր հետազոտություններ բժշկական կազմակերպություններում.....</i>	31

**Աղյուսակների ցանկ**

Աղյուսակ 1.	<i>ՄԻԱՎ-ով վարակված տղամարդկանց և կանանց բաշխումը՝ ըստ փոխանցման ուղիների.....</i>	8
Աղյուսակ 2.	<i>Երեխաների շրջանում ՄԻԱՎ-ի փոխանցման ուղիները.....</i>	9
Աղյուսակ 3.	<i>CD4+ լիմֆոցիտների քանակը ՄԻԱՎ վարակի ախտորոշման պահին.....</i>	21
Աղյուսակ 4.	<i>Տուբերկուլոզ/ՄԻԱՎ համակցված վարակ.....</i>	22
Աղյուսակ 5.	<i>Վիրուսային հեպատիտ B/ՄԻԱՎ և վիրուսային հեպատիտ E/ՄԻԱՎ համակցված վարակներ .....</i>	22
Աղյուսակ 6.	<i>Օփիոիդային փոխարինող բուժումը Հայաստանում.....</i>	23

Աղյուսակ 7.	ՀՌՎ դեղերի նկատմամբ ՄԻԱՎ-ի կայունության վաղ կանխման ցուցանիշներ (ՎԿՑ).....	25
Աղյուսակ 8.	ՀՌՎ դեղերի նկատմամբ ՄԻԱՎ-ի կայունության վաղ կանխման ցուցանիշները մեծահասակների շրջանում, 2017թ. ....	26
Աղյուսակ 9.	ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի գլոբալ մոնիտորինգի ցուցանիշներ, 2017թ.....	27
Աղյուսակ 10.	ՄԻԱՎ-ի ՄԵՓՎ-ի վավերացման ցուցանիշներ, 2014-2017թթ. ....	28
Աղյուսակ 11.	ՄԵՄՓԿ-ի կասկադի ցուցանիշներ (ծրագրային տվյալներ, հաշվետվական ձևեր), 2013-2017թթ. ....	30
Աղյուսակ 12.	ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունները՝ ըստ լաբորատորիաների, 2017թ. ....	32
Աղյուսակ 13.	ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների թիվը՝ ըստ մարզերի.....	34
Աղյուսակ 14.	ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունները՝ ըստ բնակչության խմբերի և սեռի, 2017թ. ....	34
Աղյուսակ 15.	ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտված ՀՀ քաղաքացիների բաշխումը՝ ըստ տարիքի, սեռի և բնակության վայրի, 2017թ. ....	37
Աղյուսակ 16.	ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդարկության, հետազոտության տեսակը և ուղեգրումը, 2013-2017թթ.....	38
Աղյուսակ 17.	Հղիների շրջանում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների դինամիկան	40
Աղյուսակ 18.	Միգրանտների շրջանում իրականացվող ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերի շրջանակներում արագ թեստավորման մեթոդով կատարված հետազոտությունները, 2017թ.....	40

# ՄԻԱՎ ՎԱՐԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2017Թ.

## ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում, 2017թ.

Հայաստանի Հանրապետությունում մարդու իմունային անբավարարության վիրուսով վարակվածության դեպքերի արձանագրումը սկսվել է 1988 թվականից: Մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ը ՀՀ քաղաքացիների շրջանում գրանցվել է ՄԻԱՎ վարակի 2908 դեպք, որից 51-ը՝ երեխաների շրջանում:

ՄԻԱՎ վարակ ունեցողներից 1476-ի մոտ ախտորոշվել է ՁԻԱՀ, որից 29-ը երեխաների շրջանում: Գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների մահվան 691 դեպք: Մահացածների թվում կա 10 երեխա:


ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակի գնահատումը վկայում է, որ հանրապետությունում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց հաշվարկային թիվը կազմում է 3400:

## ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և մահվան դեպքերը՝ ըստ գրանցման տարիների

Ընդհանուր առմամբ ՄԻԱՎ վարակի և ՁԻԱՀ-ի բոլոր գրանցված դեպքերի ավելի քան կեսն արձանագրվել է վերջին 5 տարիների ընթացքում:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և մահվան դեպքերի բաշխումը վերջին 5 տարիների ընթացքում ըստ գրանցման տարիների ներկայացված է գծապատկեր 1-ում:


**Գծապատկեր 1.** ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և մահվան դեպքերի բաշխումը՝ ըստ գրանցման տարիների, 2013-2017թթ.



## ՄԻԱՎ վարակի դեպքերը՝ ըստ սեռի և տարիքային խմբերի

ՄԻԱՎ-ով վարակվածների կեսից ավելին՝ 51%-ը փստորոշման պահին եղել է 25-39 տարիքային խմբում է, այսինքն՝ ակտիվ վերարտադրողական հասակում: ՄԻԱՎ վարակի դեպքերի բաշխումը՝ ըստ սեռի և տարիքային խմբերի, ներկայացված է գծապատկեր 2-ում: Նշված տարիքային խմբի մասնաբաժինը վերջին հինգ տարիներին արձանագրված դեպքերի մեջ կազմել է 46%, միաժամանակ ավելացել է 40-ից բարձր տարիքային խմբերի մասնաբաժինը:


**Գծապատկեր 2. ՄԻԱՎ վարակի դեպքերի բաշխումը՝ ըստ սեռի և տարիքային խմբերի**



ՄԻԱՎ վարակի արձանագրված դեպքերի ընդհանուր կազմում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ 2020 մարդ (70%), իգական սեռի ներկայացուցիչների մոտ արձանագրվել է վարակի 888 դեպք (30%):

Վերջին հինգ տարիներին արձանագրված դեպքերի մեջ սեռերի հարաբերակցությունը եղել է նույնը: ՄԻԱՎ վարակի դեպքերի բաշխումը՝ ըստ սեռի վերջին 5 տարիների ընթացքում ներկայացված է գծապատկեր 3-ում:

**Գծապատկեր 3.** ՄԻԱՎ վարակի դեպքերի բաշխումը՝ ըստ սեռի և գրանցման տարիների, 2013-2017թթ.




**ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերը՝ ըստ փոխանցման ուղիների**

ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի վերլուծությունը՝ ըստ փոխանցման ուղիների, ցույց է տալիս, որ ՀՀ-ում ՄԻԱՎ վարակի փոխանցման հիմնական ուղիներն են հետերոսեքսուալ ճանապարհը (68%) և թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով վարակումը (23%): Սրանցից բացի, արձանագրվել են հոմոսեքսուալ ճանապարհով (3%), մորից երեխային (1,5%) և արյան միջոցով (0,1%) ՄԻԱՎ վարակի փոխանցման դեպքեր:

Վերջին հինգ տարիներին հետերոսեքսուալ ճանապարհը կազմել է 78,3%, թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով վարակումը 12%, հոմոսեքսուալ ճանապարհը 4,4%, մորից երեխային փոխանցումը 1,4% (գծապատկեր 4):

**Գծապատկեր 4.** ՄԻԱՎ վարակի դեպքերի բաշխումը՝ ըստ փոխանցման ուղիների, 2013-2017թթ.






Հետերոսեքսուալ ճանապարհով ՄԻԱՎ-ի փոխանցումը վարակման հիմնական ուղին է թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց շրջանում (աղյուսակ 1): ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի վերլուծությունը՝ ըստ փոխանցման ուղիների և սեռի, ցույց է տալիս, որ տղամարդկանց կեսից ավելին (57,4%) վարակվել է հետերոսեքսուալ ճանապարհով, իսկ 32,6%-ը՝ թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով: Գրեթե բոլոր կանայք վարակվել են սեռական ճանապարհով (97,2%):

**Աղյուսակ 1.** ՄԻԱՎ-ով վարակված տղամարդկանց և կանանց բաշխումը՝ ըստ փոխանցման ուղիների

Սեռ	Փոխանցման ուղի										Ընդամենը	
	Թմրամիջոցների ներարկային օգտագործում		Հետերոսեքսուալ հարաբերություններ		Հոմոսեքսուալ հարաբերություններ		Արյուն		Անհայտ			
	Բաց. թիվ	%	Բաց. թիվ	%	Բաց. թիվ	%	Բաց. թիվ	%	Բաց. թիվ	%	Բաց. թիվ	%
Ար	651	32,6	1145	57,4	92	4,6	-	-	107	5,4	1995	100
Իգ	4	0,5	839	97,2	-	-	1	0,1	18	2,2	862	100

Վերջին հինգ տարիներին ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի վերլուծությունը՝ ըստ փոխանցման ուղիների և սեռի, ցույց է տալիս, որ տղամարդկանց 71,6% վարակվել է հետերոսեքսուալ ճանապարհով, իսկ 17,4%-ը՝ թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով (գծապատկեր 5): Գրեթե բոլոր կանայք վարակվել են սեռական ճանապարհով (96,6%):

**Գծապատկեր 5.** ՄԻԱՎ-ի փոխանցման ուղիները՝ ըստ սեռի, 2013-2017թթ.



Գրեթե բոլոր երեխաները վարակվել են ՄԻԱՎ վարակ ունեցող իրենց մայրերից (աղյուսակ 2):

**Աղյուսակ 2. Երեխաների շրջանում ՄԻԱՎ-ի փոխանցման ուղիները**

Մորից երեխային		Արյան միջոցով		Անհայտ		Ընդամենը	
Բաց. թիվ	%	Բաց. թիվ	%	Բաց. թիվ	%	Բաց. թիվ	%
45	88,2	3	5,9	3	5,9	51	100


**Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ վարակի համաճարակի բնորոշ առանձնահատկությունները վերջին հինգ տարիներին**

Վերջին հինգ տարիներին ՀՀ-ում ՄԻԱՎ վարակի համաճարակի առանձնահատկություններն են՝

- Վարակի փոխանցման հիմնական ուղին հետերոսեքսուալ ճանապարհն է **(2013-2017թթ.՝ 78,3%)**:
- ՄԻԱՎ վարակով պացիենտների մեծամասնությունն արտերկրում դրսևորել է ոչ անվտանգ վարքագիծ և հավանաբար վարակվել է այնտեղ **(2013-2017թթ.՝ 58%)**:
- Զգալի է արձանագրվող դեպքերի թվում աշխատանքային միգրացիայի գործոնի ազդեցությունը (2013-2017թթ. արձանագրված ՄԻԱՎ վարակի 1527 դեպքերի **70%-ը** եղել են աշխատանքային միգրանտները և նրանց զուգընկերները):
- Արձանագրվող դեպքերի ընդհանուր կազմում թմրամիջոցների ներարկային օգտագործողների (ԹՆՕ), կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կանանց (ԿՍԿ), հոմոսեքսուալ կապեր ունեցող տղամարդկանց (SUS) մասնաբաժինը մնում է կայուն ցածր **(2013-2017թթ.՝ 17,5%)**:


Վերջին հինգ տարիներին արձանագրված դեպքերի մեջ կայուն բարձր է հետերոսեքսուալ ճանապարհով վարակման դեպքերի մասնաբաժինը (գծապատկեր 6):

**Գծապատկեր 6.** ՄԻԱՎ-ի փոխանցման հիմնական ուղիները, 2013-2017թթ.




Հետերոսեքսուալ ճանապարհով վարակման դեպքերը գերակշռող են թե ՀՀ-ում, թե արտերկրում վարակվածների շրջանում (գծապատկեր 7, 8):

**Գծապատկեր 7.** ՄԻԱՎ վարակի արձանագրված դեպքերի բաշխումը՝ ըստ փոխանցման ուղիների և վարակման հավանական վայրերի, 2013-2017թթ. (ՀՀ-ում վարակվածներ)




**Գծապատկեր 8.** ՄԻԱՎ վարակի արձանագրված դեպքերի բաշխումը՝ ըստ փոխանցման ուղիների և վարակման հավանական վայրերի, 2013-2017թթ. (արտերկրում վարակվածներ)




Վերջին հինգ տարիներին շարունակում է զգալի մնալ միգրացիայի գործոնի ազդեցությունը երկրում արձանագրվող դեպքերի ընդհանուր թվի վրա (գծապատկեր 9): Այսպես, 2013-2017թթ. ընթացքում արձանագրված ՄԻԱՎ վարակով պացիենտների կեսից ավելին, վարակվել է արտերկրում, որոնցից մոտ 92%-ը՝ ՌԴ-ում (ՌԴ – 91,7%, Ուկրաինա – 4,2%, Վրաստան – 0,9%, Թուրքիա – 0,6%, Ղազախստան – 0,5%, Ուզբեկստան – 0,5%, այլ երկրներ – 1,6%):

**Գծապատկեր 9.** Վարակման հավանական վայրերը՝ ըստ տարիների, 2013-2017թթ.




Ընդհանուր առմամբ 2013-2017թթ. արձանագրված դեպքերի մեծամասնությունը՝ 58%-ը, կազմում են արտերկրում վարակվածները, 12%-ը՝ նրանց զուգընկերները (գծապատկեր 10): Այսպիսով, արձանագրված դեպքերի 70%-ը կապված է միգրացիայի հետ:

**Գծապատկեր 10.** Միգրացիոն գործոնի դերը 2013-2017թթ. արձանագրված դեպքերի կազմում (մեծահասակներ)



Վերջին հինգ տարիներին արձանագրվող դեպքերի ընդհանուր կազմում, այսպես կոչված, «դասական ռիսկի խմբերի», այսինքն՝ թմրամիջոցների ներարկային օգտագործողների, կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կանանց և հոմոսեքսուալ կապեր ունեցող տղամարդկանց համամասնությունը շարունակում է մնալ ցածր 20%-ից (գծապատկեր 11): Մեծամասնությունը՝ 78,8%-ը, կազմում են միգրանտները և նրանց զուգընկերները, վերոնշյալ խմբերին պատկանողների զուգընկերները, ոչ անվտանգ սեռական վարքագիծ դրսևորողները:


**Գծապատկեր 11.** ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի բաշխումը՝ ըստ բնակչության խմբերի, 2013-2017թթ.



## ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերը՝ ըստ Հայաստանի մարզերի

ՄԻԱՎ վարակի դեպքերի առավելագույն թիվն արձանագրվել է Երևանի բնակիչների շրջանում՝ 902 դեպք, որը կազմում է բոլոր գրանցված դեպքերի մոտ 1/3-ը (գծապատկեր 12): ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի թվով երկրորդ տեղում Շիրակի մարզն է՝ 323 դեպք, ինչը կազմում է բոլոր գրանցված դեպքերի 11,1%-ը:

**Գծապատկեր 12.** ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի բաշխումը՝ ըստ ՀՀ մարզերի



## **ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակն Արագածոտնի մարզում**

Արագածոտնի մարզի բնակիչների շրջանում 1988թ. մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ը գրանցվել է ՄԻԱՎ վարակի 116 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտների ընդհանուր կազմում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ 79 մարդ (68%), իգական սեռի ներկայացուցիչների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 37 դեպք (32%): Երեխաների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 2 դեպք:

ՄԻԱՎ-ով վարակվածների 45%-ը 25-39 տարիքային խմբում է:

ՄԻԱՎ վարակով պացիենտների 76,7%-ը վարակվել է հետերոսեքսուալ ճանապարհով, 15,5%-ը՝ թմրամիջոցների ներարկային գործածման միջոցով: Սրանցից բացի արձանագրվել է հոմոսեքսուալ ճանապարհով ՄԻԱՎ վարակի փոխանցման 4 և մորից երեխային ՄԻԱՎ վարակի փոխանցման 1 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 64-ի մոտ (կին՝ 14, երեխա՝ 2) ախտորոշվել է ՁԻԱՀ, գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների մահվան 22 դեպք: Մահացածների թվում կա 2 կին:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 90-ը (կին՝ 34, երեխա՝ 2) գտնվում են դիսպանսերային հսկողության մեջ ՁԻԱՀ-ի ԿԿԿ-ում: Նրանցից 73-ը ստանում են ՀՌՎ բուժում:

## **ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակն Արարատի մարզում**

Արարատի մարզի բնակիչների շրջանում 1988թ. մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ը գրանցվել է ՄԻԱՎ վարակի 237 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտների ընդհանուր կազմում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ 162 մարդ (68%), իգական սեռի ներկայացուցիչների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 75 դեպք (32%): Երեխաների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 4 դեպք:

ՄԻԱՎ-ով վարակվածների 45,6%-ը 25-39 տարիքային խմբում է:

ՄԻԱՎ վարակով պացիենտների 71,3%-ը վարակվել է հետերոսեքսուալ ճանապարհով, 19,8%-ը՝ թմրամիջոցների ներարկային գործածման միջոցով: Սրանցից բացի արձանագրվել են մորից երեխային ՄԻԱՎ վարակի փոխանցման 6 և հոմոսեքսուալ ճանապարհով ՄԻԱՎ վարակի փոխանցման 8 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 123-ի մոտ (կին՝ 34, երեխա՝ 3) ախտորոշվել է ՁԻԱՀ, գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների մահվան 58 դեպք: Մահացածների թվում կան 9 կին և 4 երեխա:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 164-ը (կին՝ 59, երեխա՝ 2) գտնվում են դիսպանսերային հսկողության մեջ ՁԻԱՀ-ի ԿԿԿ-ում: Նրանցից 120-ը ստանում են ՀՌՎ բուժում:



## **ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակն Արմավիրի մարզում**

Արմավիրի մարզի բնակիչների շրջանում 1988թ. մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ը գրանցվել է ՄԻԱՎ վարակի 250 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտների ընդհանուր կազմում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ 171 մարդ (68%), իգական սեռի ներկայացուցիչների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 79 դեպք (32%): Երեխայների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 5 դեպք:

ՄԻԱՎ-ով վարակվածների մոտ 50%-ը 25-39 տարիքային խմբում է:

ՄԻԱՎ վարակով պացիենտների 70,4%-ը վարակվել է հետերոսեքսուալ ճանապարհով, 21,2%-ը՝ թմրամիջոցների ներարկային գործածման միջոցով: Սրանցից բացի արձանագրվել են մորից երեխային ՄԻԱՎ վարակի փոխանցման 4, հոմոսեքսուալ ճանապարհով փոխանցման՝ 7 և արյան միջոցով փոխանցման՝ 1 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 140-ի մոտ (կին՝ 30, երեխա՝ 4) ախտորոշվել է ՁԻԱՀ, գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների մահվան 53 դեպք: Մահացածների թվում կան 9 կին և 1 երեխա:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 186-ը (կին՝ 67, երեխա՝ 4) գտնվում են դիսպանսերային հսկողության մեջ ՁԻԱՀ-ի ԿԿԿ-ում: Նրանցից 134-ը ստանում են ՀՌՎ բուժում:

## **ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Գեղարքունիքի մարզում**

Գեղարքունիքի մարզի բնակիչների շրջանում 1988թ. մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ը գրանցվել է ՄԻԱՎ վարակի 224 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտների ընդհանուր կազմում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ 159 մարդ (71%), իգական սեռի ներկայացուցիչների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 65 դեպք (29%): Երեխաների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 3 դեպք:

ՄԻԱՎ-ով վարակվածների ավելի քան 57%-ը 25-39 տարիքային խմբում է:

ՄԻԱՎ վարակով պացիենտների 87,5%-ը վարակվել է հետերոսեքսուալ ճանապարհով, 9%-ը՝ թմրամիջոցների ներարկային գործածման միջոցով: Սրանցից բացի արձանագրվել են մորից երեխային ՄԻԱՎ վարակի փոխանցման 2 և արյան միջոցով փոխանցման 1 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 78-ի մոտ (կին՝ 14, երեխա՝ 2) ախտորոշվել է ՁԻԱՀ, գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների մահվան 33 դեպք: Մահացածների թվում կա 7 կին:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 169-ը (կին՝ 52, երեխա՝ 3) գտնվում են դիսպանսերային հսկողության մեջ ՁԻԱՀ-ի ԿԿԿ-ում: Նրանցից 120-ը ստանում են ՀՌՎ բուժում:

### **ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Լոռու մարզում**

Լոռու մարզի բնակիչների շրջանում 1988թ. մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ը գրանցվել է ՄԻԱՎ վարակի 293 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտների ընդհանուր կազմում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ 203 մարդ (69%), իգական սեռի ներկայացուցիչների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 90 դեպք (31%): Երեխաների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 10 դեպք:

ՄԻԱՎ-ով վարակվածների մոտ 56%-ը 25-39 տարիքային խմբում է:

ՄԻԱՎ վարակով պացիենտների 67%-ը վարակվել է հետերոսեքսուալ ճանապարհով, 20%-ը՝ թմրամիջոցների ներարկային գործածման միջոցով: Սրանցից բացի արձանագրվել են մորից երեխային ՄԻԱՎ վարակի փոխանցման 9 և հոմոսեքսուալ ճանապարհով փոխանցման 10 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 145-ի մոտ (կին՝ 33, երեխա՝ 5) ախտորոշվել է ՁԻԱՀ, գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների մահվան 79 դեպք: Մահացածների թվում կան 15 կին և 2 երեխա:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 199-ը (կին՝ 67, երեխա՝ 7) գտնվում են դիսպանսերային հսկողության մեջ ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում: Նրանցից 140-ը ստանում են ՀՌՎ բուժում:

### **ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Կոտայքի մարզում**

Կոտայքի մարզի բնակիչների շրջանում 1988թ. մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ը գրանցվել է ՄԻԱՎ վարակի 213 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտների ընդհանուր կազմում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ 154 մարդ (72%), իգական սեռի ներկայացուցիչների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 59 դեպք (28%): Երեխաների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 4 դեպք:

ՄԻԱՎ-ով վարակվածների ավելի քան 50%-ը 25-39 տարիքային խմբում է:

ՄԻԱՎ վարակով պացիենտների 73%-ը վարակվել է հետերոսեքսուալ ճանապարհով, 16%-ը՝ թմրամիջոցների ներարկային գործածման միջոցով: Սրանցից բացի արձանագրվել են մորից երեխային ՄԻԱՎ վարակի փոխանցման 3 և հոմոսեքսուալ ճանապարհով փոխանցման 12 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 114-ի մոտ (կին՝ 24, երեխա՝ 3) ախտորոշվել է ՁԻԱՀ, գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների մահվան 46 դեպք: Մահացածների թվում կա 9 կին:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 160-ը (կին՝ 50, երեխա՝ 4) գտնվում են դիսպանսերային հսկողության մեջ ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում: Նրանցից 127-ը ստանում են ՀՌՎ բուժում:

## **ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Շիրակի մարզում**

Շիրակի մարզի բնակիչների շրջանում 1988թ. մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ը գրանցվել է ՄԻԱՎ վարակի 323 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտների ընդհանուր կազմում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ 227 մարդ (70,3%), իգական սեռի ներկայացուցիչների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 96 դեպք (29,7%): Երեխաների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 2 դեպք:

ՄԻԱՎ-ով վարակվածների մոտ 52,3%-ը 25-39 տարիքային խմբում է:

ՄԻԱՎ վարակով պացիենտների 68%-ը վարակվել է հետերոսեքսուալ ճանապարհով, 25%-ը՝ թմրամիջոցների ներարկային օգտագործման միջոցով: Սրանցից բացի արձանագրվել են մորից երեխային ՄԻԱՎ վարակի փոխանցման 2, հոմոսեքսուալ ճանապարհով փոխանցման 10 և արյան միջոցով վարակման 1 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 155-ի մոտ (կին՝ 40, երեխա՝ 1) ախտորոշվել է ՁԻԱՀ, գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների մահվան 69 դեպք: Մահացածների թվում կա 5 կին:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 230-ը (կին՝ 82, երեխա՝ 2) գտնվում են դիսպանսերային հսկողության մեջ ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում: Նրանցից 164-ը ստանում են ՀՌՎ բուժում:

## **ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Սյունիքի մարզում**

Սյունիքի մարզի բնակիչների շրջանում 1988թ. մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ը գրանցվել է ՄԻԱՎ վարակի 124 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտների ընդհանուր կազմում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ 81 մարդ (65%), իգական սեռի ներկայացուցիչների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 43 դեպք (35%): Երեխաների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 2 դեպք:

ՄԻԱՎ-ով վարակվածների 53%-ը 25-39 տարիքային խմբում է:

ՄԻԱՎ վարակով պացիենտների 71%-ը վարակվել է հետերոսեքսուալ ճանապարհով, 24%-ը՝ թմրամիջոցների ներարկային գործածման միջոցով: Սրանցից բացի արձանագրվել է մորից երեխային ՄԻԱՎ վարակի փոխանցման 2 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 65-ի մոտ (կին՝ 14, երեխա՝ 1) ախտորոշվել է ՁԻԱՀ, գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների մահվան 29 դեպք: Մահացածների թվում կա 11 կին:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 89-ը (կին՝ 30, երեխա՝ 2) գտնվում են դիսպանսերային հսկողության մեջ ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում: Նրանցից 64-ը ստանում են ՀՌՎ բուժում:

## **ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Տավուշի մարզում**

Տավուշի մարզի բնակիչների շրջանում 1988թ. մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ը գրանցվել է ՄԻԱՎ վարակի 76 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտների ընդհանուր կազմում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ 52 մարդ (68,4%), իգական սեռի ներկայացուցիչների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 24 դեպք (31,6%): Երեխաների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 1 դեպք:

ՄԻԱՎ-ով վարակվածների 50%-ը 25-39 տարիքային խմբում է:

ՄԻԱՎ վարակով պացիենտների 79%-ը վարակվել է հետերոսեքսուալ ճանապարհով, 13%-ը՝ թմրամիջոցների ներարկային գործածման միջոցով: Սրանցից բացի արձանագրվել են մորից երեխային ՄԻԱՎ վարակի փոխանցման 1 և հոմոսեքսուալ ճանապարհով փոխանցման 3 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 40-ի մոտ (կին՝ 9) ախտորոշվել է ՁԻԱՀ, գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների մահվան 13 դեպք: Մահացածների թվում կա 3 կին:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 61-ը (կին՝ 20, երեխա՝ 1) գտնվում են դիսպանսերային հսկողության մեջ ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում: Նրանցից 50-ը ստանում են ՀՌՎ բուժում:

## **ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի իրավիճակը Վայոց ձորի մարզում**

Վայոց ձորի բնակիչների շրջանում 1988թ. մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ը գրանցվել է ՄԻԱՎ վարակի 36 դեպք:

ՄԻԱՎ վարակով պացիենտների ընդհանուր կազմում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները՝ 24 մարդ (67%), իգական սեռի ներկայացուցիչների շրջանում արձանագրվել է վարակի 12 դեպք (28%): Երեխաների շրջանում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի 1 դեպք:

ՄԻԱՎ-ով վարակվածների մոտ 47%-ը 25-39 տարիքային խմբում է:

ՄԻԱՎ վարակով պացիենտների 80,6%-ը վարակվել է հետերոսեքսուալ ճանապարհով, 14%-ը՝ թմրամիջոցների ներարկային գործածման միջոցով: Սրանցից բացի, արձանագրվել են հոմոսեքսուալ ճանապարհով ՄԻԱՎ վարակի փոխանցման 1 և մորից երեխային ՄԻԱՎ վարակի փոխանցման 1 դեպք:


ՄԻԱՎ վարակով պացիենտներից 22-ի մոտ (կին՝ 6, երեխա՝ 1) ախտորոշվել է ՁԻԱՀ, գրանցվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով պացիենտների մահվան 12 դեպք: Մահացածների թվում կան 1 կին և 1 երեխա:

ՄԻԱՎ վարակով պացիենտներից 23-ը (կին՝ 10) գտնվում են դիսպանսերային հսկողության մեջ ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում: Նրանցից 19-ը ստանում են ՀՌՎ բուժում:

## Բնակչության տարբեր խմբերի շրջանում ՄԻԱՎ-ի տարածվածությունը և վարքագծային ցուցանիշները

Եթե մեծահասակ բնակչության՝ 15-49 տարեկանների շրջանում ՄԻԱՎ-ի տարածվածությունը Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում կազմում է 0,9%, Ուկրաինայում՝ 0,9%, Մոլդովայում՝ 0,6%, Վրաստանում՝ 0,5%, և Տաջիկստանում՝ 0,3%, ապա Հայաստանում այդ ցուցանիշը համեմատաբար ցածր է և կազմում է 0,2%, այսինքն՝ 4,5 անգամ ցածր է տարածաշրջանային միջին ցուցանիշից (զճապատկեր 13):

**Գճապատկեր 13.** *ՄԻԱՎ-ի տարածվածությունը մեծահասակների շրջանում Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում և Հայաստանի Հանրապետությունում, 2017թ.*



**Դիսպանսերային հսկողություն, հակառետրովիրուսային բուժում, մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելիչ բուժում և հետկոնտակտային կանխարգելիչ բուժում**

2017թ. վերջի դրությամբ դիսպանսերային հսկողության մեջ գտնվել է ՄԻԱՎ վարակով 2067 պացիենտ, որոնցից 35-ը՝ երեխաներ: 2017թ. ընթացքում ՄԻԱՎ վարակով 1773 պացիենտ այցելել է ՁԻԱՀ-ի ԿՀԿ և ստացել համապատասխան բուժօգնություն, նրանցից 32-ը եղել են երեխաներ: 2017թ. վերջի դրությամբ 1530 պացիենտ ստանում էր հակառետրովիրուսային (ՀՌՎ) բուժում, որոնցից 29-ը՝ երեխաներ: 2017թ. ընթացքում մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելիչ բուժում ստացել և ավարտել է 33 հղի: Հետկոնտակտային կանխարգելիչ բուժում տրամադրվել է 49 մարդու:

ՀՌՎ բուժումն սկսելուց 12 ամիս հետո բուժման մեջ գտնվող մեծահասակների և երեխաների տոկոսը 2017թ. կազմել է 88,4%: Վերջին 5 տարիների ընթացքում ՄԻԱՎ վարակ ունեցողների կեսից ավելին (55,5%) ախտորոշվել են ՄԻԱՎ վարակի ուշ փուլերում՝ ունենալով CD4+ լիմֆոցիտների 350 բջիջ/մմ<sup>3</sup>-ից ցածր մակարդակ (աղյուսակ 3):

**Աղյուսակ 3.** CD4+ լիմֆոցիտների քանակը ՄԻԱՎ վարակի ախտորոշման պահին

CD4 + լիմֆոցիտների մակարդակը	Պացիենտների ընդհանուր %-ը 2013-2017թթ.
<200	37,8
200-349	17,7
350-499	17,5
>500	27,0
<b>Ընդամենը</b>	<b>100</b>

## Համակցված վարակներ

2017թ. արձանագրվել է տուբերկուլոզ/ՄԻԱՎ համակցված վարակի 57 դեպք (աղյուսակ 4):

### Աղյուսակ 4. Տուբերկուլոզ/ՄԻԱՎ համակցված վարակ

Տարեթիվ	Տուբերկուլոզ/ՄԻԱՎ համակցված վարակի արձանագրված դեպքերի ընդհանուր թիվը
2013	67
2014	86
2015	81
2016	64
2017	57

2017թ. ընթացքում արձանագրվել են վիրուսային հեպատիտ Ց/ՄԻԱՎ համակցված վարակի 37 և վիրուսային հեպատիտ Բ/ՄԻԱՎ համակցված վարակի 8 դեպք (աղյուսակ 5):

### Աղյուսակ 5. Վիրուսային հեպատիտ Ց/ՄԻԱՎ և վիրուսային հեպատիտ Բ/ՄԻԱՎ համակցված վարակներ

Տարեթիվ	Վիրուսային հեպատիտ Ց/ՄԻԱՎ	Վիրուսային հեպատիտ Բ/ՄԻԱՎ	Վիրուսային հեպատիտ Ց/վիրուսային հեպատիտ Բ /ՄԻԱՎ
2013	33	6	3
2014	44	7	1
2015	30	2	1
2016	39	6	-
2017	37	8	2

## Օփիոիդային փոխարինող բուժումը Հայաստանում

2017թ. վերջի դրությամբ մեթադոնային փոխարինող բուժում ստացողների թիվը կազմել է 501, որոնցից 160-ը՝ քրեակատարողական հիմնարկներում գտնվողներ: 501 մեթադոնային փոխարինող բուժում ստացողներից 22-ը եղել են ՄԻԱՎ վարակով պացիենտ (աղյուսակ 6):

### Աղյուսակ 6. Օփիոիդային փոխարինող բուժումը Հայաստանում


Համակազմ	2013	2014	2015	2016	2017
Օփիոիդային փոխարինող բուժում ստացող ԹՆՕ-ների ընդհանուր թիվը	301	430	480	495	501
ՔԿՀ-ներում գտնվողներ	70	131	159	162	160
ՄԻԱՎ վարակ ունեցողներ	21	26	30	29	22



## ՄԻԱՎ վարակի բուժման աստիճանասանդղակ (կասկադ), 2017թ.

2017թ. վերջի դրությամբ ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց հաշվարկային թիվը կազմել է 3400 (ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրի «Սպեկտրում» համակարգչային ծրագրի տվյալ), որոնցից իրենց կարգավիճակի մասին իմացել են միայն 2265-ը (67%): Նրանցից դիսպանսերային հսկողության վերցվել է 2067-ը (91,3%), վերջին մեկ տարվա ընթացքում ՁԻԱՀ-ի ԿԿԿ է այցելել և դիսպանսերային հսկողություն է անցել 1698-ը (82%), ՀՌՎ բուժում է ստացել 1530-ը (90,2%), չհայտնաբերվող վիրուսային ծանրաբեռնվածություն է ունեցել 1304-ը (բուժում ստացողների 85%-ը): Ինչպես երևում է ՄԻԱՎ վարակի բուժման աստիճանասանդղակից (գծապատկեր 14), ամենամեծ բացը ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց հաշվարկային թվի և իրենց կարգավիճակն իմացողների միջև առկա տարբերությունն է: «90-90-90» թիրախներին հասնելու տեսանկյունից Հայաստանը գտնվում է «67-67-85» մակարդակի վրա:

**Գծապատկեր 14.** ՄԻԱՎ վարակի բուժման աստիճանասանդղակ



ՄԻԱՎ-ով ապրողների հաշվարկային թիվ - 3400

## ՄԻԱՎ-ի դեղակայունության հսկողություն

ՀՌՎ դեղերի նկատմամբ ՄԻԱՎ-ի առաջնային (փոխանցվող) դեղակայունության հայտնաբերման, ՀՀ-ում դեղակայունության մուտագիանների համաճարակաբանական հսկողության, երկրի տարածքում շրջանառվող ՄԻԱՎ-ի առավել տարածված ենթատիպերի որոշման նպատակով 2015թ.-ից ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում ներդրվել է ՄԻԱՎ-ի դեղակայունության հսկողությունը:

Համաձայն ԱՀԿ-ի առաջարկությունների՝ ՄԻԱՎ-ի դեղակայունության հսկողությունը պետք է իրականացվի 3 հիմնական ուղղությամբ՝ ՀՌՎ դեղերի նկատմամբ ՄԻԱՎ-ի կայունության վաղ կանխման ցուցանիշների (աղյուսակ 7) վերլուծություն (աղյուսակ 8), առաջնային դեղակայունության տարածվածության վերլուծություն, առաջին շարքի դեղերով ՀՌՎ բուժում ստացող պացիենտների շրջանում ՄԻԱՎ-ի դեղակայունության տարածվածության վերլուծություն:

2017թ. ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում առաջնային դեղակայունության տարածվածության վերլուծության և առաջին շարքի դեղերով ՀՌՎ բուժում ստացող պացիենտների շրջանում ՄԻԱՎ-ի դեղակայունության տարածվածության վերլուծության նպատակով ՄԻԱՎ վարակ ունեցող պացիենտներից սկսել է իրականացվել արյան նմուշառում (լաբորատոր հետազոտությունները նախատեսվում է իրականացնել 2018թ.):

**Աղյուսակ 7.** ՀՌՎ դեղերի նկատմամբ ՄԻԱՎ-ի կայունության վաղ կանխման ցուցանիշներ (ՎԿՑ)

N	Ցուցանիշ	Թիրախային ցուցանիշներ ԱՀԿ*
1.	<b>ՀՌՎ դեղերի ժամանակին ստացումը</b> <i>Մինչ ՀՌՎ դեղերի ստացված նախորդ չափաբաժնի ավարտը դեղեր ստացած պացիենտների տոկոսը</i>	Կարմիր՝ < 80% Դեղին՝ 80 - 90% Կանաչ՝ > 90%
2.	<b>ՀՌՎ բուժման անընդհատությունը</b> <i>ՄԻԱՎ վարակով մեծահասակների և երեխաների տոկոսը, որոնք շարունակում են սրանալ ՀՌՎ բուժում այն սկսելուց 12 ամիս անց</i>	Կարմիր՝ < 75% Դեղին՝ 75 - 85% Կանաչ՝ > 85%
3.	<b>ՀՌՎ դեղերի անխափան մատակարարումը</b> <i>Տարվա (12 ամիսների) ընթացքում ՀՌՎ դեղերի անխափան մատակարարման ամիսների տոկոսը</i>	Կարմիր՝ < 100% Կանաչ՝ 100%
4.	<b>ՀՌՎ բուժման նշանակման մոտեցումները</b> <i>Մեկ կամ երկու ՀՌՎ դեղերով բուժում ստացող պացիենտների տոկոսը</i>	Կարմիր՝ > 0% Կանաչ՝ 0%
5.	<b>ՎԾ ճնշվածությունը</b> <i>ՀՌՎ բուժում ստացող ՄԻԱՎ վարակով պացիենտների տոկոսը, որոնք ունեն ՎԾ չհայտնաբերվող մակարդակ բուժում սկսելուց 12 ամիս անց</i>	Կարմիր՝ < 70% Դեղին՝ 70 - 85% Կանաչ՝ > 85%

\* Կարմիր՝ ցածր ցուցանիշ, թիրախայինից ցածր, դեղին՝ չափավոր, սակայն թիրախայինից ցածր ցուցանիշ, կանաչ՝ գերազանց ցուցանիշ, թիրախն իրականացված է:

**Աղյուսակ 8.** ՀՌՎ դեղերի նկատմամբ ՄԻԱՎ-ի կայունության վաղ կանխման ցուցանիշները մեծահասակների շրջանում, 2017թ.

<b>ՎԿՑ մեծահասակների շրջանում</b>		
ՎԿՑ 1	ՀՌՎ դեղերի ժամանակին ստացումը	Դեղին
ՎԿՑ 2	ՀՌՎ բուժման անընդհատությունը	Կանաչ
ՎԿՑ 3	ՀՌՎ դեղերի անխափան մատակարարումը	Կանաչ
ՎԿՑ 4	ՀՌՎ բուժման նշանակման մոտեցումները	Կանաչ
ՎԿՑ 5	ՎԾ ճնշվածությունը	Կանաչ

## Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի բնագավառում 2017 թվականի առաջընթացի վերաբերյալ զեկույցի ցուցանիշներ

Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի բնագավառում 2017 թվականի առաջընթացի վերաբերյալ ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի միացյալ ծրագրին ներկայացված զեկույցի ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 9-ում:

**Աղյուսակ 9. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի գլոբալ մոնիտորինգի ցուցանիշներ, 2017թ.**

Ցուցանիշներ	Արժեք	Տարի
ՄԻԱՎ վարակով մեծահասակների և երեխաների տոկոսը, ովքեր շարունակում են ստանալ ՀՌՎ բուժում այն սկսելուց 12 ամիս անց	88,4%	2017
ՄԻԱՎ վարակով մեծահասակների և երեխաների տոկոսը, որոնց CD4+ բջջիջների քանակը ավտորոշման պահին եղել է <200բջ/մմ <sup>3</sup>	36,7%	2017
Հակառետրովիրուսային դեղամիջոցների չընդհատվող մատակարարում	100%	2017
Մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելիչ բուժում ստացածների տոկոսը	100%	2017
Տուբերկուլոզ/ՄԻԱՎ համակցված վարակով պացիենտների տոկոսը, որոնք ստացել են ՀՌՎ բուժում տուբերկուլոզի բուժման ընթացքում	53	2017
Հաշվետու տարվա ընթացքում դիսպանսերային հսկողության վերցված ՄԻԱՎ վարակով պացիենտների շրջանում ակտիվ տուբերկուլոզ ունեցողների տոկոսը	13,2%	2017
Հաշվետու տարվա ընթացքում դիսպանսերային հսկողության վերցված ՄԻԱՎ վարակով պացիենտների շրջանում լատենտ տուբերկուլոզի դեմ բուժում սկսածների տոկոսը	6,3%	2017
ՀՌՎ բուժում ստացող ՄԻԱՎ վարակով պացիենտների տոկոսը, որոնք հետազոտվել են հեպատիտ Բ-ի վերաբերյալ	71,7%	2017
ՄԻԱՎ վարակով մեծահասակների և երեխաների տոկոսը, ովքեր ստանում են ՀՌՎ բուժում և միաժամանակ սկսել են ստանալ բուժում վիրուսային հեպատիտ Բ-ի դեմ հաշվետու տարվա ընթացքում	100%	2017
ՀՌՎ բուժում ստացող ՄԻԱՎ վարակով պացիենտների տոկոսը, որոնք հետազոտվել են հեպատիտ Ց-ի վերաբերյալ	14,3%	2017
ՄԻԱՎ վարակով մեծահասակների և երեխաների տոկոսը, ովքեր ստանում են ՀՌՎ բուժում և միաժամանակ սկսել են ստանալ բուժում վիրուսային հեպատիտ Ց-ի դեմ հաշվետու տարվա ընթացքում	5,7%	2017

## ՄԻԱՎ-ի ՄԵՓՎ-ի վավերացման ցուցանիշներ

ՄԻԱՎ-ի ՄԵՓՎ-ի վավերացման ցուցանիշները ներկայացված են աղյուսակներ 10 և 11-ում:

**Աղյուսակ 10. ՄԻԱՎ-ի ՄԵՓՎ-ի վավերացման ցուցանիշներ, 2014-2017թթ.**

<b>Ազդեցության ցուցանիշներ</b>					
<b>Անվանում</b>		<b>2014</b>	<b>2015</b>	<b>2016</b>	<b>2017</b>
1.1	100 000 կենդանի ծնունդների հաշվով մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման նոր դեպքերի գործակիցը (ԱՀԿ թիրախ՝ $\leq 50$ )	2,3	2,3	4,9	0
1.2	Կրճքով չկերակրող ՄԻԱՎ վարակ ունեցող մայրերից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման ցուցանիշը (ԱՀԿ թիրախ՝ $< 2$ )	1,78	1,25	1,22	1,7
<b>Գործընթացի ցուցանիշներ</b>					
2.1	Անտենատալ խնամք ստացող հղի կանանց տոկոսը (առնվազն մեկ այցելություն) (ԱՀԿ թիրախ՝ $\geq 95$ )	99,5%	99,6%	99,8%	99,8%
2.2	ՄԻԱՎ-ի նկատմամբ իրենց կարգավիճակի մասին իմացող հղի կանանց տոկոսը (ԱՀԿ թիրախ՝ $\geq 95$ )	96,1%	98,1%	95,6%	>98%
2.3	Հակառետրովիրուսային բուժում ստացող ՄԻԱՎ վարակ ունեցող հղի կանանց տոկոսը (ԱՀԿ թիրախ՝ $\geq 90$ )	96,4%	96,7%	100%	100%
<b>Ծրագրային ցուցանիշներ</b>					
3.3	Երեխաների շրջանում ՄԻԱՎ վարակի նոր դեպքերի թիվը	2	3	2	0
3.4	15-49 տարիքային խմբի կանանց շրջանում ՄԻԱՎ վարակի նոր դեպքերը	96	73	79	80
3.5	Մորից երեխային փոխանցումը նվազեցնելու համար ՀՌՎ դեղեր ստացած ՄԻԱՎ-ով ապրող հղի կանանց տոկոսը՝ տարբերակված ըստ ՀՌՎ բուժման սխեմաների	96,4%	96,7%	100%	100%

<b>Ազդեցության ցուցանիշներ</b>					
<b>Անվանում</b>		<b>2014</b>	<b>2015</b>	<b>2016</b>	<b>2017</b>
3.6	Կյանքի առաջին 6 շաբաթներին մորից երեխային փոխանցումը կանխարգելելու նպատակով կանխարգելիչ ՀՌՎ բուժում ստացած ՄԻԱՎ վարակ ունեցող մայրերից ծնված նորածինների տոկոսը	96,6%	100%	100%	100%
3.7	Կրծքով կերակրման ընթացքում ՄԻԱՎ-ի փոխանցման հավանականությունը նվազեցնելու նպատակով ՀՌՎ դեղեր ստացած ՄԻԱՎ վարակ ունեցող մայրերից ծնված նորածինների տոկոսը	0%	0%	0%	0%
3.8	Ծնվելուց հետո 2 ամսվա ընթացքում ՄԻԱՎ-ի վերաբերյալ ՊՇՌ մեթոդով հետազոտված ՄԻԱՎ վարակ ունեցող մայրերից ծնված նորածինների տոկոսը	79,3%	89,7%	94,7%	100%
3.9	Ծնվելուց հետո 2 ամսվա ընթացքում կոտրիմոքսազոլով կանխարգելիչ բուժում սկսած ՄԻԱՎ վարակ ունեցող մայրերից ծնված նորածինների տոկոսը	34,5%	62,1%	84,2%	64%
3.10	ՀՌՎ բուժումն սկսելուց 12 ամիս հետո այն շարունակող հղի կանանց տոկոսը	60%	83,3%	67,9%	87%
3.13	Բժշկական հաստատություններին հասանելիությունը	Հասանելի են	Հասանելի են	Հասանելի են	Հասանելի են
3.13.1	Անտենատալ կլինիկական ծառայություններ մատուցող բժշկական հաստատությունների թիվը	101	101	101	101
3.13.2	Բժշկական հաստատությունների թիվը, որոնք տրամադրում են ՀՌՎ բուժում երեխաներին	1	1	1	1
3.13.3	Բժշկական հաստատությունների քանակը, որտեղ կատարվում են ՄԻԱՎ-ի վերաբերյալ նորածինների հետազոտություններ ՊՇՌ մեթոդով	1	1	1	1


**Աղյուսակ 11. ՄԵՄՓԿ-ի կասկադի ցուցանիշներ (ծրագրային տվյալներ, հաշվետվական ձևեր), 2013-2017թթ.**

N	Անվանումը	2013	2014	2015	2016	2017
1.	Անտենատալ կլինիկաներում խնամքի վերցված հղիների թիվը	47552	48849	47092	44643	41752
2.	Անտենատալ խնամքի ծածկույթը	99,4%	99,5%	99,6%	99,8%	99,8%
3.	ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության ծածկույթը	97,8%	96,1%	98,1%	95,6%	96,5%
4.	ՄԻԱՎ վարակ ունեցող հղիների թիվը	15	26	16	22	19
5.	ՄԵՄՓԿ նպատակով ՀՌՎ բուժում ստացած հղիների թիվը	19	29	30	37	36
6.	ՄԻԱՎ վարակ ունեցող ծննդաբերած հղիների թիվը	19	27	29	37	33
7.	ՄԻԱՎ վարակ ունեցող մայրերից ծնված ՀՌՎ բուժում ստացած երեխաների թիվը	20	28	29	37	34
8.	ՀՌՎ բուժում ստացած ՄԻԱՎ վարակ ունեցող մայրերից ծնված ՄԻԱՎ վարակ ունեցող նորածիններ	0	0	0	0	0

## ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն

ՄԻԱՎ վարակի վերջնական լաբորատոր ախտորոշում կատարվում է ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում, որտեղ գտնվում է երկրի միակ ռեֆերենսային լաբորատորիան: ՄԻԱՎ-ի վերաբերյալ լաբորատոր հետազոտություններ իրականացվում են Երևան քաղաքի 32 և մարզերի 24 լաբորատորիաներում (գծապատկեր 15):

**Գծապատկեր 15.** ՄԻԱՎ-ի վերաբերյալ լաբորատոր հետազոտություններ բժշկական կազմակերպություններում



Ընդհանուր առմամբ 2017թ. բժշկական կազմակերպությունների՝ ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն իրականացնող լաբորատորիաներում կատարվել է ՄԻԱՎ-ի վերաբերյալ 136488 հետազոտություն (աղյուսակ 12 և 13):



**Աղյուսակ 12. ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունները՝ ըստ լաբորատորիաների, 2017թ.**

<b>ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն իրականացնող լաբորատորիաներ</b>	<b>Տեղակայումը (քաղաք/մարզ)</b>	<b>Հետազոտությունների թիվը 2017</b>
«ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ	Երևան	51092
«Պրոֆ. Ռ. Օ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ	Երևան	12289
«Էրեբունի» բժշկական կենտրոն ՓԲԸ	Երևան	267
«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ	Երևան	3002
«Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ	Երևան	4068
«Մոր և մանկան առողջության պահպանման ԳՀԿ» ՓԲԸ	Երևան	3139
«Նորք ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» ՓԲԸ	Երևան	461
«ՀՀ ոստիկանության բժշկական վարչության հոսպիտալ»	Երևան	37
«Երևանի կայազորային հոսպիտալ» պետական հիմնարկ	Երևան	735
«ՀՀ ՊՆ կենտրոնական կայազորային զինվորական հոսպիտալ»	Երևան	4754
«Դիագնոստիկա բժշկական միավորում» ԲԲԸ	Երևան	35
«Վիոլա» ՍՊԸ	Երևան	1133
«Արմենիկում» ՓԲԸ	Երևան	60
«Նորմեդ» ՍՊԸ	Երևան	376
«Մաշկաբանության և սեռավարակաբանության բժշկագիտական կենտրոն» ՓԲԸ	Երևան	2538
«Արաբկիր» բժշկական համալիր, երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ ՍՊԸ	Երևան	398
«Դիասթար» ՍՊԸ	Երևան	49
«ՊՐՈՄ-ՏԵՍՏ» ՍՊԸ	Երևան	581
«ՀՀ ԱՆ հանրապետական նարկոլոգիական կենտրոն» ՓԲԸ	Երևան	925
«Բժշկական գենետիկայի և առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՍՊԸ	Երևան	451
«ՑԻՏՈ-ԼԱԲ» ՍՊԸ	Երևան	127
«Էկոսենս» ՍՊԸ	Երևան	243
«Մուրացան» համալսարանական կլինիկական հիվանդանոց	Երևան	1496
«Հերացի» թիվ 1 հիվանդանոցային համալիր	Երևան	4190
«Աուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն ՓԲԸ	Երևան	672
«Դավիդյանց լաբորատորիաներ» ՍՊԸ	Երևան	171
«Դիալաբ» կլինիկական ախտորոշիչ լաբորատորիա ՍՊԸ	Երևան	194
«Աստղիկ» բժշկական կենտրոն ՍՊԸ	Երևան	7209
«Սլավմեդ» բժշկական կենտրոն ՍՊԸ	Երևան	1329

ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն իրականացնող լաբորատորիաներ	Տեղակայումը (քաղաք/մարզ)	Հետազոտությունների թիվը 2017
«Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոն» ՓԲԸ	Երևան	449
«Թիվ 8 պոլիկլինիկա » ՓԲԸ	Երևան	18
«Մեդայն Կլինիկ» բժշկական կենտրոն ՍՊԸ	Երևան	1
«Գյումրու արյան փոխներարկման կայան» ՓԲԸ	Շիրակ	5526
«Մաշկավեներաբանության և կոսմետոլոգիայի կենտրոն» ՍՊԸ	Շիրակ	17
«Ախուրյանի մոր և մանկան առողջության կենտրոն» ՊՈԱԿ	Շիրակ	240
«Գյումրու Ն.Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկա» ՓԲԸ	Շիրակ	453
«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ	Շիրակ	527
«Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ	Շիրակ	148
«Արմավիրի արյան փոխներարկման կայան» ՊՓԲԸ	Արմավիր	4299
«Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ	Արարատ	2587
«Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ	Սյունիք	1987
«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	Սյունիք	603
«Եղեգնաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ	Վայոց ձոր	612
«Հրազդանի մարզային արյան բանկ» ՓԲԸ	Կոտայք	2504
«ՀՀ ԱՆ տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ	Կոտայք	1043
«Լոռու մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ	Լոռի	3616
«Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ	Լոռի	79
«Գուգարք կենտրոնական պոլիկլինիկա» ՓԲԸ	Լոռի	496
«Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	Լոռի	400
«Վանաձորի կայազորային հոսպիտալ» պետական հիմնարկ	Լոռի	1624
«Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ	Գեղարքունիք	1988
«Մարտունու բժշկական կենտրոն» ՊՓԲԸ	Գեղարքունիք	1996
«Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	Տավուշ	1493
«Նիկոլ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	Տավուշ	461
«Բերդի բժշկական կենտրոն» ՓԲԸ	Տավուշ	15
«Աշտարակի բժշկական կենտրոն» ՓԲԸ	Արագածոտն	1287
<b>Ընդամենը</b>		<b>136488</b>

**Աղյուսակ 13. ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների և հետազոտված հղիների թիվը՝ ըստ մարզերի**

Տեղակայումը (մարզ)	Հետազոտությունների ընդհանուր թիվը	Հետազոտված հղիների թիվը
Երևան	103530	21001
Շիրակ	6911	4551
Լոռի	6215	2816
Արմավիր	4299	3187
Գեղարքունիք	3984	3135
Արարատ	2587	2405
Սյունիք	2590	1855
Կոտայք	2504	1636
Տավուշ	1969	1808
Արագածոտն	1287	1284
Վայոց ձոր	612	584
<b>Ընդամենը</b>	<b>136488</b>	<b>44262</b>

2017թ. իրականացված ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունները՝ ըստ բնակչության խմբերի և սեռի, ներկայացված են աղյուսակ 14-ում:

**Աղյուսակ 14. ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունները՝ ըստ բնակչության խմբերի և սեռի, 2017թ.**

Ծածկագիր		Հետազոտվածներ		
		Ընդամենը	այդ թվում	
			իգական	արական
Ա	Բ	1	2	3
100	Հետազոտված ՀՀ քաղաքացիներ – <b>Ընդամենը</b>	<b>131888</b>	<b>85948</b>	<b>45940</b>
<b>այդ թվում՝</b>				
101	սեռական հարաբերություն ունեցածներ այդ թվում՝	523	290	233
101.1	ՄԻԱՎ վարակ ունեցողի կամ շճադրականի հետ	325	243	82
101.2	անհայտ կարգավիճակով անձի հետ	198	47	151
102	թմրամիջոցների ներարկային օգտագործողներ	1381	7	1374

Ծածկագիր		Հետազոտվածներ		
		Ընդամենը	այդ թվում	
			իզական	արական
Ա	Բ	1	2	3
103	հոմո և բիսեքսուալներ	1280	0	1280
104	սեռավարակներ ունեցողներ	477	422	55
105	կոմերցիոն սեռական ծառայություն տրամադրողներ	2017	2017	0
106	միգրանտներ	7214	211	7003
107	ՄԻԱՎ-ով մասնագիտական վարակման վտանգի ենթարկված անձինք	397	337	60
108	դոնորներ	16860	7061	9799
109	հղիներ	44262	44262	X
109.1	այդ թվում 15 – 24 տարեկան	14556	14556	X
109-Ա	հղիության ընդհատման համար դիմած կանայք	978	978	X
110	ռեցիպիենտներ	1	0	1
111	զինծառայողներ	931	76	855
112	քրեակատարողական հիմնարկներում գտնվողներ	2387	98	2289
113	կլինիկական ցուցումներով հետազոտված մեծահասակներ, այդ թվում՝	31113	13712	17401
113.1	տուբերկուլոզով հիվանդներ	1589	426	1163
113.2	հեպատիտ Ց-ով հիվանդներ	113	36	77
113.3	հեպատիտ Բ-ով հիվանդներ	52	17	35
113.4	այլ կլինիկական ցուցումներով հետազոտված մեծահասակներ	29359	13233	16126
114	անանուն հետազոտվածներ	2236	950	1286
115	ՄԻԱՎ վարակով հիվանդի կամ ՄԻԱՎ-ի նկատմամբ դրական անձի հետ ոչ մասնագիտական կոնտակտ ունեցածներ	101	63	38
116	հետազոտված երեխաներ, այդ թվում՝	2336	960	1376
116.1	ՄԻԱՎ վարակ ունեցող մայրերից ծնվածներ	78	42	36
116.2	կլինիկական ցուցումներով հետազոտվածներ	2258	918	1340
117	այլ	17394	14504	2890
150	ՀՀ քաղաքացիների հետազոտությունների ընդհանուր քանակը	<b>135961</b>	<b>88193</b>	<b>47768</b>

Ծածկագիր		Հետազոտվածներ		
		Ընդամենը	այդ թվում	
			իզական	արական
Ա	Բ	1	2	3
200	Հետազոտված օտարերկրյա քաղաքացիներ - <b>Ընդամենը</b>	<b>484</b>	<b>216</b>	<b>268</b>
<b>այդ թվում՝</b>				
201	սեռական հարաբերություն ունեցածներ այդ թվում՝	13	8	5
201.1	ՄԻԱՎ վարակ ունեցողի կամ շճադրականի հետ	10	7	3
201.2	անհայտ կարգավիճակով անձի հետ	3	1	2
202	թմրամիջոցների ներարկային օգտագործողներ	3	0	3
203	հոմո և բիսեքսուալներ	0	0	0
204	սեռավարակներ ունեցողներ	0	0	0
205	կոմերցիոն սեռական ծառայություն տրամադրողներ	0	0	0
207	ՄԻԱՎ-ով մասնագիտական վարակման վտանգի ենթարկված անձինք	0	0	0
208	դոնորներ	0	0	0
209	հղիներ	26	26	X
209.1	այդ թվում 15 – 24 տարեկան	10	10	X
209-Ա	հղիության ընդհատման համար դիմած կանայք	1	1	X
210	ռեցիպիենտներ	0	0	0
211	զինծառայողներ	0	0	0
212	քրեակատարողական հիմնարկներում գտնվողներ	3	0	3
213	կլինիկական ցուցումներով հետազոտված մեծահասակներ, այդ թվում՝	225	105	120
213.1	տուբերկուլոզով հիվանդներ	28	7	21
213.2	հեպատիտ Յ-ով հիվանդներ	0	0	0
213.3	հեպատիտ Բ-ով հիվանդներ	0	0	0
213.4	այլ կլինիկական ցուցումներով հետազոտված մեծահասակներ	197	98	99
214	անանուն հետազոտվածներ	43	11	32
215	ՄԻԱՎ վարակով հիվանդի կամ ՄԻԱՎ-ի նկատմամբ դրական անձի հետ ոչ մասնագիտական կոնտակտ ունեցածներ	0	0	0
216	հետազոտված երեխաներ, այդ թվում՝	16	5	11

Ծածկագիր		Հետազոտվածներ		
		Ընդամենը	այդ թվում	
			իգական	արական
Ա	Բ	1	2	3
216.1	ՄԻԱՎ վարակ ունեցող մայրերից ծնվածներ	2	1	1
216.2	կլինիկական ցուցումներով հետազոտվածներ	14	4	10
217	այլ	154	60	94
250	օտարերկրյա քաղաքացիների հետազոտությունների ընդհանուր քանակը	527	226	301
300	հետազոտվածների ընդհանուր թվաքանակը	132372	86164	46208
400	հետազոտությունների ընդհանուր քանակը	136488	88419	48069

ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտված ՀՀ քաղաքացիների բաշխումը՝ ըստ տարիքի, սեռի և բնակության վայրի, ներկայացված է աղյուսակ 15-ում:

**Աղյուսակ 15.** ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտված ՀՀ քաղաքացիների բաշխումը՝ ըստ տարիքի, սեռի և բնակության վայրի, 2017թ.

Տարիք	Ընդամենը	Այդ թվում՝ ըստ բնակության վայրի					
		Երևան		ՀՀ այլ քաղաքներ		ՀՀ գյուղեր	
		իգական	արական	իգական	արական	իգական	արական
Մինչև 15	2974	605	858	403	580	227	301
15-24	28634	5849	6894	6105	2077	6724	985
25-39	60514	19126	7338	14960	5660	11023	2407
40-49	14954	3657	3231	2663	2483	1971	949
50 և բարձր	24812	4962	5296	4405	4304	3268	2577
<b>Ընդամենը</b>	<b>131888</b>	<b>34199</b>	<b>23617</b>	<b>28536</b>	<b>15104</b>	<b>23213</b>	<b>7219</b>

Վերջին տարիներին աճել են բուժաշխատողների նախաձեռնությամբ ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտության և խորհրդատվության ծավալները: Արդյունքում բարելավվել է ՄԻԱՎ վարակի հայտնաբերումը: Մասնավորապես, 2017թ. արձանագրված ՄԻԱՎ վարակի դեպքերի մեծամասնությունը՝ 70,9%-ը, ախտորոշվել է բուժաշխատողի նախաձեռնությամբ իրականացված ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության արդյունքում, 15,9%-ը վերադարձել է Հայաստան արդեն իսկ ՄԻԱՎ վարակ ախտորոշմամբ, 4,7%-ը հետազոտվել և ախտորոշում է ստացել միզրանտների շրջանում

իրականացվող ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերի շրջանակներում, 3,1%-ը՝ սեփական նախաձեռնությամբ ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության արդյունքում, 0,3%-ը՝ հանրային միջոցառումների շրջանակներում իրականացվող ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտության արդյունքում, 0,3%-ը՝ ինքնաթեստավորման արդյունքում և 4,8%-ը ԹՆՕ-ների, ՏՄՏ-ների և ԿՄԿ-ների շրջանում հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող աուբիչ աշխատանքների արդյունքում (աղյուսակ 16):

**Աղյուսակ 16.** ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվության, հետազոտության տեսակը և ուղեգրումը, 2013-2017թթ.

ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվության, հետազոտության տեսակը և ուղեգրումը	2013		2014		2015		2016		2017	
	N	%	N	%	N	%	N	%	N	%
ԲԿ-ներում բուժաշխատողի նախաձեռնությամբ բացառությամբ նախաձեռնյան կլինիկաները)	94	39,5%	135	40,4%	136	46,3%	162	53,4%	187	52,2%
Բուժաշխատողի նախաձեռնությամբ նախաձեռնյան կլինիկաներում	12	5,0%	24	7,2%	15	5,1%	19	6,3%	13	3,6%
ԶԻԱՀ-ի ԿԿԿ-ում բուժաշխատողի նախաձեռնությամբ (զուգընկերոջ, երեխայի, ծնողի հետազոտություն)	44	18,5%	63	18,9 %	53	18,0 %	55	18,2%	47	13,1%
ՔԿՀ-ում բուժաշխատողի նախաձեռնությամբ	10	4,2%	5	1,5%	5	1,7%	3	1,0%	7	2,0%
Արտերկրում հետազոտված և դրական արդյունք ստացած	56	23,5%	75	22,5%	47	16,0%	42	13,9%	57	15,9%
Այցելուի նախաձեռնությամբ	8	3,4%	12	3,6%	13	4,4%	7	2,3%	11	3,1%

**Ընդամենը բուժաշխատողի նախաձեռնությամբ 70,9%**

ՄԻԱՎ վարակի վերաբերյալ խորհրդատվության, հետազոտության տեսակը և ուղեգրումը	2013		2014		2015		2016		2017	
	N	%	N	%	N	%	N	%	N	%
Միգրանտների շրջանում իրականացվող ծրագրեր	2	0,8%	19	5,7%	16	5,4%	6	2,0%	17	4,7%
Հանրային միջոցառումներ	-	-	-	-	-	-	2	0,7%	1	0,3%
Ինքնաթեստավորում	-	-	-	-	-	-	-	-	1	0,3%
SUS-ների շրջանում իրականացվող ծրագրեր	9	3,8%	1	0,3%	5	1,7%	7	2,3%	9	2,5%
ԿՍԿ-ների շրջանում իրականացվող ծրագրեր	2	0,8%	0	0,0	4	1,4%	0	0,0	6	1,7%
ԹՆՕ-ների շրջանում իրականացվող ծրագրեր	1	0,4%	0,0	0,0	0	0,0	0	0,0	2	0,6%
<b>Ընդամենը</b>	<b>238</b>	<b>100%</b>	<b>334</b>	<b>100%</b>	<b>294</b>	<b>100%</b>	<b>303</b>	<b>100%</b>	<b>358</b>	<b>100%</b>

Վերջին տարիներին գրեթե բոլոր հղի կանայք հետազոտվել են ՄԻԱՎ-ի վերաբերյալ: Հղիների շրջանում ՄԻԱՎ վարակի առավելագույն թվով դեպքերն արձանագրվել են 2014թ.՝ 26 դեպք (աղյուսակ 17): ՄԻԱՎ-ի նկատմամբ դրական այդ 26 հղիների զուգընկերների 57%-ը եղել են միգրանտներ, ովքեր վարակվել են արտերկրում: 2017թ. ՄԻԱՎ վարակ արձանագրվել է 19 հղի կնոջ մոտ, որոնց զուգընկերների 42%-ը եղել են արտերկրում վարակված միգրանտներ:



**Աղյուսակ 17.** Հղիների շրջանում ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների և արձանագրված ՄԻԱՎ վարակի դեպքերի դինամիկան, 2013-2017թթ.

Տարեթիվ	ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտված հղիների ընդհանուր թիվը	Հղիների շրջանում արձանագրված ՄԻԱՎ վարակի դեպքերը
2013	46801	15 (87% միգրանտի զուգընկեր)
2014	46976	26 (57% միգրանտի զուգընկեր)
2015	46364	16 (50% միգրանտի զուգընկեր)
2016	42788	22 (50% միգրանտի զուգընկեր)
2017	44262	19 (42% միգրանտի զուգընկեր)

Միգրանտների շրջանում իրականացվող ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերի շրջանակներում 2017թ. արագ թեստավորման մեթոդով կատարված ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների թիվը ներկայացված է աղյուսակ 18-ում:

**Աղյուսակ 18.** Միգրանտների շրջանում իրականացվող ՄԻԱՎ վարակի կանխարգելման ծրագրերի շրջանակներում արագ թեստավորման մեթոդով կատարված հետազոտությունները, 2017թ.

Բնակչության խումբը	Հետազոտությունների թիվը
Միգրանտ	5041
Միգրանտի զուգընկեր	9450
Համայնքի բնակիչ	2927
<b>Ընդամենը</b>	<b>17418</b>